«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆ

ք. Երևան «19» «12» 2016 թ.

ՀՐԱՄԱՆ N 1 - ՄԲ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ՄՄ ՏԿ 010/2011) ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԻՊԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ժ) ենթակետի, «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 27-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հերթական ընդհանուր ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի N 09 արձանագրությունը՝ **հրամայում եմ.**

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան տրված համապատասխանության սերտիֆիկատի և գրանցված համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի փոփոխությունը ու Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 010/2011) պահանջներին համապատասխան տրված արտադրանքի տիպի սերտիֆիկատի գրանցման համարի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի 13.02.2015թ. N 1-ՄԲ հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
«Հավատարմագրման ազգային
մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի
«19» «12» 2016 թ.
N 1 -Ա հրամանի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ՄՄ ՏԿ 010/2011) ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԻՊԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համապատասխանության սերտիֆիկատի գրանցման համարի կառուցվածքը.

Համապատասխանության սերտիֆիկատի և արտադրանքի տիպի սերտիֆիկատի գրանցման համարի կառուցվածքը.

№ ***ԵԱՏՄ AM– X X X / X . X – X X X X – X X X X*** (հայերեն)

№ ***ЕАЭС AM – X X X / X . X – X X X X – X X X X*** (ռուսերեն)

(1) (2) (3) (4) (5) (6)

Համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի կառուցվածքը.

№ ***AM – X X X / X . X – X X X X – X X X X***

(2) (3) (4) (5) (6)

(1) - «ԵԱՏՄ» (հայերենի դեպքում), «ЕАЭС» (ռուսերենի դեպքում)՝ Եվրասիական տնտեսական միություն հապավումը:

(2) - «AM»՝ Հայաստանի Հանրապետության կոդը:

(3) - Եզակի (չկրկնվող) հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի (ՀԳՄ) գրանցահամարը, որտեղ՝

X X X - ը ՀԳՄ-ի գրանցման հերթական համարը,

X - ը ՀԳՄ-ի հավատարմագրման տեսակը՝

S - արտադրանքի սերտիֆիկացման մարմինը:

(4) Փաստաթղթի տեսակի նշագիրը.

A - Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատներ

B - Արտադրանքի համապատասխանության հայտարարագրեր

T - Արտադրանքի տիպի սերտիֆիկատներ:

(5) Փաստաթղթի գրանցման հերթական համարը:

(6) Փաստաթղթի գրանցման տարեթիվը: